Հաստատում եմ
Համալսարանական խորհուրդ
նիստ 2, 12 ապրիլի 2023 թ.

Հաստատում եմ
Ռեկտոր
_____ **Մ. Լ. Հարությունյան**
12 ապրիլի 2023 թ.

ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՒՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Կրթության որակի ապահովման հայեցակարգ[1]

Սկզբունքներ

1 Ըստ «Կրթության մասին» ՀՀ օրենքի, «բարձրագույն մասնագիտական կրթության նպատակը բարձր մասնագիտական որակավորման կադրերի պատրաստումն ու վերարտադրումն է, միջնակարգ ընդհանուր և միջին մասնագիտական կրթության հիմքի վրա անձի՝ կրթության զարգացման պահանջմունքների բավարարումը:»

2 Այդ նպատակին է ծառայում ԵՀՀ-ում իրականացվող կրթության որակի բարելավման գործընթացը: Շարունակական այդ գործընթացն ուղղորդվում է ԵՀՀ կրթության որակի կառավարման սկզբունքներով:

ի՞նչ է սկզբունքը

Սկզբունքն այն համոզմունքը, տեսությունը կամ կանոնն է, որն ուղղորդում է մեր գործողությունները: Որակի բարելավման հիմքում որակի կառավարման սկզբունքներն են: (ISO 9001)

3 Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից ընդունված «Մասնագիտական կրթության որակի ապահովման ՀՀ շրջանակը» որդեգրել է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում (ԵԲԿՏ) գործող որակի ապահովման հետևյալ չորս սկզբունքները.[2]

1. **Որակի ներքին ապահովում.** մասնագիտական ուսումնական հաստատություններն են կրում հիմնական պատասխանատվությունն իրենց տրամադրած կրթության որակի և նրա ապահովման համար
2. **Բազմազանություն.** որակի ապահովումն արձագանքում է բարձրագույն կրթության համակարգերի, ուսումնական հաստատությունների, կրթական ծրագրերի և ուսանողների բազմազանությանը
3. **Որակի մշակույթ.** որակի ապահովումն աջակցում է որակի մշակույթի ձևավորմանը
4. **Ուսանողակենտրոն և հանրօգուտ.** որակի ապահովումը հաշվի է առնում ուսանողների, բոլոր այլ շահակիցների և հանրության կարիքներն ու սպասելիքները:

4 **1. Որակի ապահովման քաղաքականությունը** կարևոր է, քանի որ այն արտացոլում է որակի ներքին ապահովման համակարգի հիմնական մեխանիզմները և նպաստում ուսումնական հաստատության *հաշվետվողականությանը*:[3] Այն ընդգրկում է որակի շարունակական բարելավման կենսացիկլի չորս հիմնական գործողությունները՝ պլանավորում → իրականացում → ստուգում → բարելավում:

5 **2. Կրթական ծրագրերը** պետք է համապատասխանեն հաստատության առաքելությանը և ունենան սահմանված *ուսումնառության վերջնարդյունքներ*:

6 **3. Որակի մշակույթը**՝ որակի ապահովման քաղաքականությունը, ինստիտուցիոնալ համակարգն ու գործառույթները ստեղծում են շարունակական բարելավման կենսափուլ և նպաստում ուսումնական հաստատության հաշվետվողականությանը: Բոլոր ներքին

---

[1] Հայեցակարգի հիմքում են՝ ՀՀ Կրթության մասին օրենքը, ՀՀ ու Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում մասնագիտական կրթության որակի ապահովման ստանդարտները և ուղեցույցներն ու ISO-9001 որակի կառավարման սկզբունքները:

[2] Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի «ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ» (2015) http://www.anqa.am/hy/hrapparakumner/?Publications=2015

[3] ibid.

շահակիցները որակի համար պատասխանատվություն են ստանձնում և ներգրավվում որակի ապահովման մեջ: Այդ գործընթացն ուղղորդող քաղաքականությունը պետք է ունենա *պաշտոնական կարգավիճակ* և հասանելի լինի հանրությանը:[4]

7 **4. Ուսանողակենտրոն և հանրօգուտ ուսուցումը** ուսուցման ծրագրերը խրախուսում են ուսանողների ակտիվ դերը ուսումնական գործընթացի ստեղծման և շարունակական բարելավման մեջ: Այն խթանում է ուսանողների մոտիվացիան և ներգրավվածությունն ուսումնական գործընթացում: Ուսանողակենտրոն մոտեցումը կենսական նշանակություն ունի նաև ընդունելության, գնահատման և ավարտական ընթացակարգերի մշակման գործում, ինչպես նաև ներքին և համալսարանի ու այլ ՄՈՒՀ-երի միջև ուսանողների շարժունակությունը (mobility) ապահովելու համար:

Ստանդարտներ և չափանիշներ

8 ԵՀՀ-ում կիրառվող որակի ապահովման ստանդարտները (չափորոշիչները) սահմանվել և համաձայնեցվել են որպես ԵԲԿՏ-ում բարձրագույն կրթության որակի ապահովման ընդունված պրակտիկա և, հետևաբար, «պետք է հաշվի առնվեն և պահպանվեն շահակիցների կողմից բարձրագույն կրթության բոլոր հաստատություններում:»[5]

հաշվետվողականություն

ՄՈՒՀ-ի գործունեության բոլոր ոլորտներում և գործառույթներում պահանջվում է տեղեկատվական հոսքերի հստակեցում և ընթացակարգերի թափանցիկություն: ՄՈՒՀ-ի առաքելությունը և գործունեությունը կանոնակարգող համապատասխան բոլոր փաստաթղթերը պետք է լինեն հրապարակված և հասանելի դասախոսների, ուսանողների ու բոլոր շահակիցների համար:

(ՈԱԱԿ, 2015)

1. Որակի ապահովման քաղաքականություն
2. Կրթական ծրագրերի մշակում և հաստատում
3. Ուսանողակենտրոն ուսուցում և գնահատում
4. Ուսանողների ընդունում, մասնագիտական զարգացում, գնահատում և որակավորում
5. Դասավանդող կազմ
6. Ուսուցման ռեսուրսներ և ուսանողների աջակցություն
7. Տեղեկատվության կառավարում
8. Հանրային տեղեկատվություն
9. Կրթական ծրագրերի մշտադիտարկում և պարբերական վերանայում
10. Որակի արտաքին ապահովում:

9 Եվրոպական ստանդարտների ուղեցույցի հեղինակները նշում են նաև, որ ստանդարտները պետք է դիտարկել ավելի լայն համատեքստում՝ ներառելով որակավորումների շրջանակները և այն հանգամանքներ, որոնք նպաստում են ԵԲԿՏ-ում բարձրագույն կրթության թափանցիկության և փոխադարձ վստահության խթանմանը:

10 Հաշվի առնելով այդ ուղղորդումը և ԵՀՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձը՝ 2023 թվականին այդ 10 ստանդարտները լրամշակվել են: Այդուհետ համալսարանում որակի ներքին ապահովման գործընթացում 7-րդ և 8-րդ ստանդարտները միացվել և կիրառվում են որպես «Ներքին և արտաքին հաղորդակցություն», 9-րդը միացվել է 2-րդին, իսկ 10-րդ ստանդարտի փոխարեն օգտագործվում են «Հետազոտական, զարգացման և այլ ստեղծագործական գործունեություն (ՀԶՍ)» և «Ծառայություն հասարակությանը»:

11 Այսպիսով, համալսարանում որակի ներքին ապահովման 9 ստանդարտներ են.

1. **Որակի ապահովման քաղաքականություն**
2. **Կրթական ծրագրերի մշակում, հաստատում, մշտադիտարկում և պարբերական վերանայում**
3. **Ուսանողակենտրոն ուսուցում և գնահատում**
4. **Ուսանողների ընդունում, մասնագիտական զարգացում, գնահատում և որակավորում**
5. **Դասավանդող կազմ**
6. **Ուսուցման ռեսուրսներ և ուսանողների աջակցություն**

---

[4] Տե՛ս *Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area (ECTS, 2015)*, https://www.enqa.eu/esg-standards-and-guidelines-for-quality-assurance-in-the-european-higher-education-area

[5] ibid.: Որակի ապահովման չափորոշիչների ամփոփ ցանկը տեղադրված է հավելվածում:

7. **Ներքին և արտաքին հաղորդակցություն**
8. **Հետազոտական, զարգացման և այլ ստեղծագործական գործունեություն (ՀԶՍ)**
9. **Ծառայություն հասարակությանը:**

12 **1. Որակի քաղաքականությունը** մշակվում, հրապարակվում, իրականացվում, մշտադիտարկվում և պարբերաբար վերանայվում է շահակիցների հետ, համապատասխան կառույցների և գործընթացների միջոցով՝ ներգրավելով արտաքին շահակիցներին: Այդ քաղաքականությունը հասանելի է հանրությանը՝ որպես որակի վերահսկման ինստիտուցիոնալ համակարգի հենասյուն: Որակի զարգացող մշակույթը ստեղծում է շարունակական բարելավման ցիկլ և նպաստում համալսարանի հաշվետվողականությանը:

որակի ապահովման քաղաքականություն

Որակի քաղաքականությունն արդյունավետ է, երբ ներքին շահակիցները պատասխանատվություն են կրում որակի ապահովման համար և երբ հաշվի են առնվում ազգային համատեքստը, ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ առանձնահատկությունները և ռազմավարական մոտեցումը: Նման քաղաքականությունը նպաստում է.

+ որակի ապահովման համակարգի ստեղծմանը
+ ստորաբաժանումների, ղեկավարության, դասավանդող կազմի և ուսանողների որակի ապահովման պարտականությունների կատարմանը
+ ակադեմիական ազնվությանը, ազատությանը և ակադեմիական խարդախության բացառմանը
+ ուսանողների ու անձնակազմի պաշտպանությանը անհանդուրժողականությունից և ցանկացած տեսակի խտրականությունից
+ արտաքին շահակիցների ներգրավվածությանը որակի ապահովման գործում: (ECTS, 2015)

13 **2. Կրթական ծրագրերը** պետք է մշակվեն այնպես, որ համապատասխանեն ԵՀՀ ռազմավարական նպատակներին և ներառեն ուսումնական *վերջնարդյունքները*: Հստակորեն նշված և հիմնավորված ծրագրի արդյունքում ստացվող որակավորումը պետք է համապատասխանի բարձրագույն կրթության ազգային որակավորումների շրջանակի մակարդակին և Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումների շրջանակին: Կրթական ծրագրերը համալսարանի կրթական առաքելության հիմքն են: Նպաստելով ուսանողների անձնական զարգացմանը, նրանք տալիս է և՛ ակադեմիական գիտելիքներ և՛ փոխանցելի հմտություններ, որոնք կարող են կիրառվել նրանց հետագա կարիերայում:

14 ԵՀՀ-ն իրականացնում է ծրագրերի շարունակական մշտադիտարկում և պարբերական վերանայում՝ ակնկալվող արդյունքներն ապահովելու և ուսանողների ու հասարակության կարիքներին արձագանքելու համար: Ներգրավելով ուսանողներին և այլ շահակիցներին, կրթական ծրագրերի կանոնավոր մշտադիտարկումը ստեղծում է ուսման արդյունավետ և աջակցող միջավայր: Ծրագրերի վերլուծությունը վերջին հետազոտությունների տեսակետից ապահովում է դրանց արդիականությունը, հստակեցնում ուսանողների ու հասարակության ակնկալիքները, բավարարվածությունը, փոփոխվող կարիքները, ուսանողների ծանրաբեռնվածությունը, առաջընթացի և ավարտական արդյունքները, գնահատման կարգերի արդյունավետությունը, ուսումնական միջավայրը և օժանդակ ծառայությունները ու դրանց համապատասխանությունը ծրագրերին: Հավաքագրված տեղեկությունների վերլուծության արդյունքում ծրագրերը հարմարեցվում և արդիականացվում է, իսկ վերանայված ծրագրի բնութագրերը հրապարակվում են:

15 **3. Ուսանողակենտրոն ուսուցումը և գնահատումը** պահանջում է ուշադիր դիտարկել կրթական ծրագրերի մշակումը, դրանց իրականացման, արդյունքների գնահատման և ուսանողների ներգրավման պրակտիկան, քանի որ այդ ընթացքում են ստեղծվում այն պայմաններն ու հոգատար աջակցության մեխանիզմները, որոնք ապահովում են ուսանողների ուսումնական ու մասնագիտական առաջընթացը:

16 **4. Ուսանողների ընդունելության, մասնագիտական զարգացման, գնահատման և որակավորման** հրապարակված **կանոնակարգերը** ներառում են ուսանողական «կենսացիկլի» բոլոր փուլերը: Ընդունելության քաղաքականությունն ու գործընթացներն իրականացվում են հետևողականորեն և թափանցիկ կերպով: Ստեղծվում են պայմաններ ուսանողների ակադեմիական առաջընթացի աջակցության և հատկապես, նրանց

շարժունակության համար: Իսկ ավարտելիս, ուսանողները ստանում են փաստաթղթեր, որոնք բացատրում են ձեռք բերված որակավորումը, ուսումնառության արդյունքները և իրականացված ուսումնասիրությունների համատեքստը, մակարդակը, բովանդակությունն ու կարգավիճակը: Այդ նպատակով, համալսարանը գործադրում է ընթացակարգեր և գործիքներ՝ ուսանողների ընդունելության և առաջադիմության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և մշտադիտարկման համար:

17 **5.** Համալսարանը երաշխավորում է իր **դասավանդող կազմի** իրավասությունը՝ կադրերի հավաքագրման և զարգացման համար արդար և թափանցիկ գործընթացներ կիրառելով: Դասավանդողի դերը էական է բարձրորակ ուսանողակենտրոն ուսուցման և ուսանողների գիտելիքների և կարողությունների զարգացման համար: Դասավանդողների որակի շարունակական բարելավմանը նպաստող միջավայր ապահովելու համար, համալսարանը մշակում և իրականացնում է անձնակազմի հավաքագրման արդար և թափանցիկ գործընթացներին, հետևում աշխատանքի պայմաններին ու հնարավորություններ ստեղծում՝ մասնագիտական զարգացման համար: ԵՀՀ-ն աջակցում է դասավանդողների և ուսանողների հետազոտական գործունեությանը՝ կրթության ու գիտության միջև կապն ամրապնդելու համար և խրախուսում դասավանդման նորարարական մեթոդների ու նոր տեխնոլոգիաների կիրառումը:

18 **6.** Համալսարանն ունի համապատասխան և մատչելի **ուսումնական ռեսուրսներ և ուսանողների աջակցության մեխանիզմներ**: Գրադարանի, լաբորատորիաների, ՏՏ և այլ ենթակառուցվածքի գործունեության մեջ, ինչպես նաև դասավանդողների աջակցության մոտեցումներում հաշվի են առնվում ուսանողների, հատկապես՝ կես դրույքով աշխատող, արտերկրի կամ հաշմանդամություն ունեցող ուսանողների կարիքները: Որակի ապահովման ուսանողակենտրոն հայեցակարգը երաշխավորում է ռեսուրսների հասանելիությունը ու նպատակային օգտագործումը, ինչպես նաև ուսանողների իրազեկումն՝ իրենց հասանելի ծառայությունների մասին: Աջակցող և վարչական կազմի անդամները որակավորված են և հնարավորություն ունեն զարգացնելու իրենց իրավասությունները:

ուսանողակենտրոն մոտեցում

Ուսուցման ուսանողակենտրոն մոտեցումը հատկապես կարևոր է ուսանողների մոտիվացիայի բարձրացման, ինչպես նաև ուսումնական գործընթացում նրանց ակտիվ ներգրավման տեսանկյունից: (ՈԱԱԿ, 2015)

Կայուն հաջողությունը ձեռք է բերվում, երբ կազմակերպությունը գրավում և պահպանում է հաճախորդների և այլ շահակիցների վստահությունը, որին նպաստում է նրանց ներկա և ապագա կարիքների գիտակցումը: Փոխգործակցության յուրաքանչյուր ասպեկտ հնարավորություն է տալիս ավելի շատ արժեք ստեղծել նրանց համար: (ISO 9001)

19 **7. Ներքին և արտաքին հաղորդակցություն.** Ծրագրերի և այլ գործունեության մասին համապատասխան տեղեկությունն արդյունավետ կառավարման հիմնական գործոնն է: Հուսալի տվյալները շատ կարևոր են տեղեկացված որոշումներ կայացնելու համար, և, հետևաբար, համալսարանը ներգրավում է ուսանողներին և անձնակազմին տարբեր մեթոդներով տեղեկության հավաքագրման, վերլուծության և հետագա գործողությունների պլանավորման մեջ: Այդ առումով հատկապես հետաքրքիր են.

- հիմնական կատարողական ցուցանիշները
- ուսանողության բնութագիրը
- ուսանողների առաջադիմության և ուսումը թողնելու միտումները
- ուսանողների գոհունակությունը
- ուսումնական ռեսուրսները և ուսանողների աջակցություն
- շրջանավարտների մասնագիտական կարիերայի ուղիները:

20 ԵՀՀ-ի հանրային տեղեկատվությունն իր գործունեության մասին պարզ է, ճշգրիտ, օբյեկտիվ, արդիական և հեշտ հասանելի: Քանի որ այն օգտակար է ապագա և ներկա ուսանողների, շրջանավարտների, այլ շահակիցների և հանրության համար, ԵՀՀ-ն իրենց տեղեկացնում է

ուսման հնարավորությունների, իր ծրագրերի, ուսումնառության արդյունքների, ուսուցման և գնահատման կիրառվող ընթացակարգերի, շնորհած որակավորումների, ինչպես նաև շրջանավարտների աշխատանքի մասին:

21 **8. Հետազոտական, զարգացման և այլ ստեղծագործական գործունեություն** (ՀԶՍ). ԵՀՀ-ն սահմանել է իր ՀԶՍ-ի նպատակները և առաջնահերթությունները՝ հիմնվելով իր առաքելության, հասարակության ակնկալիքների ու ապագա կարիքների վրա, և գնահատում է դրանց իրականացումը և իր ՀԶՍ գործունեության հասարակական ազդեցությունը: ՀԶՍ-ն աջակցում է համալսարանում ուսումնառության և դասավանդման գործընթացին: ՀԶՍ-ի աջակցության ծառայությունները նպատակաուղղված են և նպաստում են կրթական գործընթացի նպատակների իրականացմանը:

22 **9. Ծառայություն հասարակությանը.** ԵՀՀ-ն նախաձեռնում և իրականացնում է զարգացման գործողություններ, որոնք նպաստում են համայնքի բարելավմանը և տարածում արդիական գիտելիքներ ու մոտեցումներ համալսարանի իրավասության ոլորտներում: Նպաստելով ուսումնառության շարունակական զարգացմանը՝ համալսարանն իրականացնում է անձնակազմի հետևողական վերապատրաստում և ողջ կյանքի ընթացքում ուսուցման ծրագրեր՝ ներքին և արտաքին շահառուների համար:

Հավելված Ա. ԵՀՀ որակի ապահովման քաղաքականությունն առկա է ԵՀՀ համացանցային կայքում:
Հավելված Բ. ԵՀՀ որակի ապահովման գործիքակազմը ներառում է որակի քաղաքականությունը, սույն հայեցակարգը և որակի ապահովման գործիքը, որը հասանելի է Excel ձևաչափով:

Բնօրինակը	P11-YHU_QA_concept-AM.pdf
Ստեղծվել է	2021 թ. դեկտեմբերին
Հաստատվել է	2021 թ. դեկտեմբերի ՀԽ թիվ 6 նիստում
Այս տարբերակը	P11-YHU_QA_concept_v2-AM.pdf
Հաստատվել է	2023 թ. ապրիլի 12-ին
URL	http://www.haybusak.am/concepts-policies/?lang=hy
Պլանային հաջորդ վերանայումը	2024 թ. նոյեմբեր